

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն

Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկրորդական Վարժարան

Յիսուանեակի Յոբելեանական Պաշտօնական Հանդիսութիւն

Յիսուն տարի առաջ, 1947- ին, վերջ գտած էր Երկրորդ Աշխարհամարտը եւ Միացեալ ազգերու կանոնագիրը յայտարարուած: Երկու գերութեր, հակոտնեայ զաղափարախօսութեամբ, կը տիրէին երկրագունդին. կը սկսէր Պաղ Պատերազմի երկարամեայ պայքարը : Նորանկախ Լիբանանի մէջ, ազգային միութեան կառավարութիւն մը կ'առնէր պետականութեան առաջին քայլերը : Իսրայէլ, գոյութիւն չ'ունէր որպէս պետութիւն սակայն շրջանային մեծ տագնապը արդէն կը սաղմնաւորուէր: Հայաստան մաս կը կազմէր Սովետ Միութեան՝ հողային տարածք ունենալով իր պատմական սահմաններուն մէկ տասաներորդը: 1946 -1947-ի Ներգաղթը պատմական հանգրուան մըն էր Հայրենիքի գոյատեւումին եւ Սփիւռքի մնացորդացին համար: Լիբանանի Հայերուն մեծամասնութիւնը կ'ապրէին Պուրճ Համուտի եւ Պէյրութի որոշ թաղամասերուն մէջ: Հոն կը ծնէին, հոն կ'ուսանէին, հոն կը հիմնէին աշխատանոցներ եւ վաճառատուններ, հոն կ'ամուսնանային եւ հոն կը մահանային առանց պէտքը զգալու յարաբերելու ոչ Հայերու հետ, արաբերէն լեզուն նկատելով որպէս երրորդ կարգի գիտելիք: 1952 թուականին, Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկրորդական Վարժարանը կը փոխադրուէր իր նորակառոյց շէնքը, Սբ. Նշան եկեղեցիին մօտ, հանրակառքով կէս ժամ հեռու Տորայէն սակայն՝ հասանելի հինգ դահէկանով: Տուներուն մէջ չկային սարնարան, լուացքի մեքենայ, հեռաձայն, հեռատեսիլ եւ *կաճէթ* բառը չէր ստեղծուած տակաւին: Մայր վարժարանին դասարանները արեւոտ էին եւ շատ աւելի հաճելի քան մեզմէ շատերուն տուներուն թիթեղեայ տանիքին ցուրտը:

Յիսուն տարի ետք, Միացեալ Նահանգները վերածուած է աշխարհի միակ գերութին: Գիտութիւնը կը փորձէ ամեկարողութեան յատկութիւնը խլել Աստուծմէ: Սակայն, ամէն մէկ նոր յայտնագործութիւն կը բանայ դռները բազմապատկեալ նոր հարցադրումներու, լուսարձակի տակ առնելով մարդկութեան կարողութիւններուն սահմանափակութիւնը եւ անհրաժեշտութիւնը պահպանելու բարոյական հիմնական արժէքներ որոնք կը կանոնաւորեն ժողովուրդներու եւ անհատներու փոխ-յարաբերութիւնը: Հայաստան անկախ է հինգ տարիէ ի վեր: Ազգային խորհրդանշական, պատմական եւ մշակութային արժէքներուն մեծամասնութիւնը հաւատքի եւ յոյսի աղբիւր են բոլոր Հայերուն համար անկախ իրենց յարանուանական,

կուսակցական եւ գաղափարախօսական պատկանելիութենէն: Լիբանան, 17 տարուան փոթորիկէն ետք, կը տքնի վերագտնելու համար իր անցեալի փառքը, որպէս օրրան ազատութեան եւ հանգստաւետ կեանքի: Հայերը Լիբանանի մէջ, այժմ, տարածուած են շատ աւելի ընդարձակ աշխարհագրական մակերեսի մը վրայ: Իւրացուցած են Արաբերէնը որպէս առաջին կամ երկրորդ լեզու եւ իրենց առօրեայ յարաբերութեանց մէջ վերածուած են ամբողջական քաղաքացիներու իրենց մտահոգութիւններով, վարք ու բարքով, պարտաւորութիւններով եւ իրաւունքներով: Միաժամանակ, ինչպէս այլ հատուածներ, կը փորձեն պահպանել իրենց ինքնութիւնը, դրական մօտեցումով, առանց վարկաբեկելու ուրիշներուն արժէքները եւ ոտնակոխելու անոնց իրաւունքները : Առ այդ՝ կը վայելեն այլ անհատներու եւ հաւաքականութիւններու համակրանքն ու բարեացակամութիւնը: Մայր Վարժարանի նախկին շէնքը վերածուած է մայրուղիի եւ միայն ցանկապատին մէկ մասը կանգուն է տակաւին: Երկար տարիներէ իվեր վտարանդի, Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկրորդական Վարժարանի դասարանները նուազ հանգստաւետ են քան աշակերտներէն շատերուն տուններուն սենեակները, սպասելով որ մօտ ապագային կ'իրականանայ նոր համալիրի մը ծրագիրը:

Յիսուն տարիներու ընթացքին Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկրորդական Վարժարանը յաճախեցին հազարաւոր պատանիներ որոնց առաջին սերունդին անդամները արդէն իսկ իրենց վաթսունամեայ կայտառ տարիքը կը բոլորեն: Քանի՛ յարգելի եւ սիրելի դաստիարակներ, տարիներու ընթացքին առ յաւետ հեռացան մեզմէ, յաճախ լռելեայն, իրենց ետին ձգելով բարի յիշողութիւն մը, դիմագիծ մը, նախադասութիւն մը եւ կամ հատորներ: Անոնք մեր միտքին մէջ կը մնան ինչպէս որ էին քառասուն, երեսուն կամ քսան տարի առաջ, երբեմն մեզմէ աւելի երիտասարդ: Ներկայի դաստիարակներու յոյր կը շարունակէ իր երեցներուն սկսած ուղիով ընթանալ, երբեմն աւելի դժուար պայմաններու մէջ, սակայն նոյն համբերատարութեամբ եւ անշէջ հաւատքով:

Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկրորդական Վարժարանի Յիսնամեակը պատմական հանգրուան մը պէտք ըլլայ է համարձակ եւ իրապաշտ հարցադրումներով հստակացնելու Սփիւռքի մեր ազգային նպատակները եւ բարեփոխելու անոնց իրագործումին ծառայող միջոցները: Սփիւռքի հաւաքական կեանքի հիմնական նպատակին անորոշութիւնը, մարդկային եւ ազգային արժէքներու համակարգին այլակերպումը եւ տիեզերական նոր քաղաքակրթութեան համակարգին ազդեցութիւնը հարցեր են որոնք կը կարօտին վերծանումներու: Մարդկային կեանքին էաբանական հարցադրումը աւելի եւս կը բարդանայ Սփիւռքի Հայուն գոյութեանական պահանջքներուն եւ հաւաքական յիշողութեան զգացական գոհացումին հաշտութեամբ: Իմաստի փնտռտուքը որպէս Հայ գոյատեւելու, աւելի իրապաշտ կ'ըլլայ եթէ ընթանայ զուգահեռ մարդկային հիմնական պէտքերուն ու տենջերուն բաւարարումին:

Տեղեկատուութեան միջոցներու արագընթաց զարգացումին հետեւանքով ստեղծուող Նոր տիեզերական քաղաքակրթութիւնը կը սպառնայ բոլոր ժողովուրդներու ինքնութեան առանձնատկութեան պահպանումին: Երկրագունդի բոլոր իրադարձութիւններուն միաժամանակ հետեւելու կարելիութիւնը եւ յաւիտ ծաւալող համաշխարհային գիտելիքներու անմիջական մատչելիութիւնը կ'ազդեն մարդուն մտածողութեան եւ կը ստեղծեն նոր եւ հասարակած աշխարհահայեացք մը:

Արդ, ընկերային, տնտեսական եւ մշակութային եղափոխուող պայմաններ պահանջքը կը ստեղծեն ազգային համապարփակ տեսլականի մը փնտոտութիւն, եւ ծրագրումը հաւաքական նոր նպատակներու գործադրութեան: Այս կապակցութեամբ՝ Հայեցի դաստիարակութեան վերաբերուողութիւնը, որպէս միջոց ներմուծելու պատկանելիութեան զգացումը ապագայի սերունդներու էութեան մէջ, կը մնայ ամենէն պատասխանատու աշխատանքի դաշտը: Դժուարին ու ցից ճանապարհ մը լերան լանջին, անդունդի եզրին, հաւատքն ու յոյսը ունենալով գոյատեւելու նախապայման բայց անբաւարար խթան եթէ գործնապաշտ տրամաբանութիւնը չգործածուի որպէս յաւելեալ ուղեկից:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Լիբանանի Կրթական Յանձնախումբի վերաքննուող ներքին ծրագիր կանոնագիրը իր հիմնական առ աջադրանքներուն շարքին պիտի պարունակէ հետեւեալ պարբերութիւնները, որոնք կ'ամփոփեն կրթական մարզի պատասխանատուութիւնը՝ պատրաստելու ապագայի մարդն ու Հայը:

Դաստիարակութեան հիմնակէտը նկատել հոգիի, միտքի եւ մարմնի հաւասարակշռուած զարգացումը: Գիտելիքներու եւ ծանօթութեանց պաշարին առ ընթեր, կազմաւորել բարիքն ու գեղեցիկին սէրը, ստեղծագործ աշխատանքի, համագործակցութեան եւ պատասխանատուութեան զգացումը, դժուար կացութիւններ դիմագրաւելու կարողութիւնը ու ընկերային յարաբերութեանց շնորհը:

Պատրաստել բարոյական հիմնական սկզբունքներուն եւ մարդկային իրաւունքներուն հաւատացող, զանոնք գործնականապէս իրագործող ու պաշտպանող քաղաքացիներ:

Տնօրէններու, ուսուցչական կազմին եւ այլ մասնագետներու օժանդակութեամբ մշակել գործնական կեանքի եղափոխուող պայմաններուն յարմարող կրթական

ծրագիրներ, եւ արդիւնաւետ վարչական միջոցներով հսկել անոնց գործադրութեանց:

Պատրաստել հայութեան յաւերժութեան հաւատացող եւ հայ լեզուն, արժէքները, ինքնութիւնը եւ մշակութային ժառանգութիւնը պահպանող ու տարածող անձեր:

Պահպանել մեր ազգային արժէքներն ու ինքնութիւնը: Բառեր որոնց ստուգաբանութիւնը էական է եւ այժմէական: Արժէքներու եւ ինքնութեան սահմանումի փորձը ազգային ինքնաճանաչման մախապատրաստական քայլն է: Յո՞ երբասը պայման է որ հետեւի՝ ծանիր զբեզին եւ ոչ թէ բուսական կրաւորականութեամբ շարունակենք մեր գոյութեանական երթը առանց հարց տալու՝ դեպի ո՞ր: Միայն իմաստալից, գործնական եւ հաւաստի ազգային նպատակներ հետապնդող տեսլականով կարելի է հասնիլ նպատակասլաց կենդանութեան ուժականութեան :

Նոր դարաշրջան-հազարամեակի մախօրեակին ընդհանրապէս Լիբանանի գաղութը եւ մանաւանդ Յովակիմեան-Մամուկեան Վարժարանի սաները ինչպէս մաւ իրենց սերնդակից Լիբանանի բոլոր Հայկական Վարժարաններու սաներուն սրբազան պարտականութիւնը պէտք է ըլլայ հաւաքական ներհայեցութենէ ետք, զօրակոչի ենթարկել մեր ամբողջական կարելիութիւնները եւ սկսիլ կազմակերպուած աշխատանքի: Սփիւռքի մէջ, ազգային մոր Զարթօնք մը կարելի է եւ պէտք է տեղի ունենայ: Լիբանանի գաղութը ունի տակաւին այդ ուժականութիւնը եւ հաւատքը: Պէտք չէ վերածուիմք Մատրասեան յուշի: Այս է պատգամը մեր մայր Վարժարանի Յիսնամեակի Հանդիսութիւններուն:

Միրելի հարազատներ, յարգանքի եւ երախտագիտութեան խօսքս ուղղելով անցեալի եւ ներկայի անխտիր բոլոր դաստիարակներուն, չեմ կրնար չյիշատակել կարգ անուներ ի՞նչ ուսուցիչներէ՝

Պր Արա Թօփճեանը, մեր վարժարանին մահապետը, Պր Տնօրէնը, իր միտքի պայծառութեամբ, դաստիարակի եւ պատասխանատու դեկավարի բացառիկ խղճմտանքով, տաղանդով եւ մանաւանդ գործնական բերքով.

Պր Վահէ Վահեանը, Հայ գրականութեան մեկնաբանը, իր քերթողի մեկուսացած մըմունջով.

Պր Սիմոն Սիմոնեանը, Հայկական շունջին մրրիկը, որուն վերջին այցեքարդը «Հեռաձայնէ՛» հրամայական շէշտով, կը պահեմ աշխատասեղանիս վրան, որպէս մասունք.

Պր Օննիկ Սարգիսեանը, իր ոգետրութեամբ, համեստութեամբ, համեղ Հայերէնով եւ մտերմութեամբ.

Պր Բիւզանդ Եղիայեանը իր խորունկ մտաւորականի եւ հանրագիտարանային ծանօթութիւններուն լուռ ծանրակշռութեամբ.

Պր Չարեհ Մելքոնեանը քրականագետ քերթողը որուն պահերուն անկարելի էր մրափելու պէս երագել.

Պր Գերսամ Ահարոնեանը, պատմաբան ազգային գործիչը իր մեծ երագի հաւատքով, քննարկողի եւ համադրողի ձիրքով.

Պր Խաչեր Տօնապետեանը իր հայրական հանդարտ մայրածքին ծանր շուքով.

Պր Ժիրայր Դանիէլեանը, աշակերտը մախորդներուն եւ անոնց արժանաւոր յաջորդը՝ որպէս, բառին ամենէն լայն իմաստով, աշխատասէր Տնօրէնը:

Ինչպէս մաեւ բազմաթիւ այլ լուսապայծառ դէմքեր, թող մերուի ինծի եթէ չյիշատակեմ անոնց անմունքերը, որոնք բրուտի համբերութեամբ ձեւաւորեցին եւ շնջաւորեցին սերունդներ ամբողջ: Անոնք կը մնան մեր համեստ բայց պանծալի ազգային երախտաւորները:

Յարգանք բացականչելուն անմահ յիշատակին, ողջոյն ներկաներուն պէտէր վեհութեան եւ անոնց կտակը գործադրող, աւանդապահ նոր սերունդի դաստիարակներուն, որոնք պիտի ըլլան հարիւրամեակի տօնակատարութեան կերտիչները, հաւատքով, յոյսով, սիրով եւ ազգային վերածնունդի մկրտութեամբ:

Ճարտարապետ Մկրտիչ Լ. Պուլտութեան

23.03.1997

